

«ԶՅՈՒԳՄԱ» ՈՃԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏԶԱՍԻՋՈՑԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ՖՈԼԶՆԵՐԻ «ՇԱՌԱՉ ԵՎ ՅԱՍՈՒՄ»
ՎԵՊՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ու. Ֆոլքների երկերին շատ բնորոշ է զանազան ոճական հնարների կիրառությունը, որոնք իրենց թարմությամբ ու ինքնատիպությամբ մի առանձին արտահայտչականություն են հաղորդում գրողի ոճաստեղծ խոսքին: Հայ լեզվագրական իրականության մեջ առանձնապես շատ չի ուսումնասիրված «գյուզմա» ոճական արտահայտչամիջոցը, սակայն Ֆոլքների երկերին առնչվող թարգմանիչները բազմաթիվ անգամներ առիթ են ունեցել բախվելու այդ ոճական միջոցի համարժեք թարգմանության դժվարությանը, ուստի մեր ուշադրությունը կսեռենք «Շառաչ և ցասում»¹ վեպում հանդիպող «գյուզմաների» այն ինքնատիպ օրինակներին, որոնց թարգմանական դժվարությունները հաղթահարվել են վեպի հայերեն թարգմանության² մեջ:

Ա. Նազարյանի կազմած բառարանում³ կարդում ենք. «zeugma – միավորում (միևնույն գլխավոր անդամ ունեցող համադաս նախադասությունների՝ առանց այդ անդամի կրկնության)» (էջ 544): Կարելի է ավելացնել, որ շատ հաճախ այդ միավորման մեջ աչքի են ընկնում առաջին հայացքից բոլորովին միմյանց հետ առնչություն չունեցող իրերի, երևույթների, հասկացությունների թվարկումներ, որոնց ներմուծած հուզարտահայտչական գործառույթը ապահովում է դրանց փոխկապվածությունն ու փիլիսոփայական ամբողջականությունը, այլապես որևէ ոճական երանգավորման մասին խոսք չիմել չի կարող: Ահա հենց սա էլ կարևորվում է «գյուզմա» արտահայտչամիջոցը հայերեն թարգմանության մեջ համարժեքորեն պահպանելու համար:

“But it was only a train, and after a while it died away beyond the trees, the long sound, and then I could hear my watch and the train dying away, as though it were running through another month or another summer somewhere, rushing away under the poised gull and all things rushing” /p.74/.

հմմտ.

«Գնացքն էր միայն, որն առժամանակ անց անհետացավ-կորավ ծառերի ետևում, ու տևական ծայրը. հետո լսեցի ժամացույցիս տկտկոցն ու անհետացող գնացքի ծայրը, որն ընթանում էր ասես ուրիշ ամսվա կամ

ուրիշ ամառվա միջով, ինչ-որ վայրերով, սրընթաց անցնում քարացած ճայի տակից, և ամեն ինչ սլանում էր» /էջ 82/:

Ֆուլբների գրչի հզորությունը հատկապես ակնհայտ է դառնում բարձր վերացարկուններ պահանջող, փիլիսոփայական խոր աշխարհայեցումի արգասիք հանդիսացող այսպիսի հատվածների հետ առնչվելիս՝ առանձնապես այն թարգմանելու նպատակով: Մի դեպքում թվարկումների շարանը սկսվում է շատ տեսանելի երևացող-անհետացող գնացքի պատկերով, որն ավարտվում է աներևույթ, սակայն «տևական ծայնի» գոյությամբ, որ դարձյալ դատապարտված է անհետանալուն, մյուս դեպքում՝ այն սկսվում է միմիայն «լսելի ժամացույցի տկտկոցով» և ավարտվում «անհետացող գնացքի ծայնով»: Երկու դեպքում էլ գրողի հզոր երևակայությունն ի մի է բերել իրականության մեջ անեզր եզրեր, որոնք խոսքը դարձնում են ոճական տեսակետից՝ գերլարված: Տվյալ դեպքում լեզվական տեսակետից ուշադրության է արժանի գյուզմայի մաս կազմող *"the long sound"* արտահայտության թարգմանությունը՝ «տևական ծայնը», որը տարբերակային ճշգրիտ համարժեք է, քանզի *"long"* բառի «երկար» իմաստն այստեղ անհարիր կլիներ ծայնին՝ «երկար ծայն», որովհետև մնացողն ու անհետացողը ծայնի տևողությունն է, ուստի կարելի էր թարգմանել կամ «երկարատև ծայնը», կամ՝ ինչպես թարգմանված է՝ «տևական ծայնը»: Ուշադրության է արժանի նաև գյուզմայի մյուս մասի՝ *"I could hear my watch"*-ի թարգմանությունը, որը բառացիորեն նշանակում է՝ «Ես կարողացա լսել իմ ժամացույցը»: Թարգմանչի ճիշտ լուծումը՝ *"լսեցի ժամացույցիս տկտկոցը"*, կայացել է «տկտկոցը» բառի ներմուծմամբ, որը ոչ միայն պատճառաբանված է, այլև *"the train dying away"* - «անհետացող գնացքի ծայնի» հետ /«ծայն» բառի ներմուծմամբ/ կազմում է գյուզմայի մի նոր զույգ:

"Their voices came over the hill, and the three slender poles like balanced threads of running fire" /p.74/. հմնտ.

«Բլրից իջնում էին նրանց ծայներն ու երեք բարակ կարթածողերը, որ ասես վազող կրակի լեզուներ լինեին» /էջ 82/:

Ջյուզմայի կիրառության լավագույն օրինակ է այս նախադասության մեջ հանդես եկող «բլրից իջնող ծայներն ու երեք բարակ կարթածողերը» թվարկումը, որտեղ ի մի են բերվել առաջին հայացքից բնավ միմյանց հետ առնչություն չունեցող մարդկային ծայներն ու ձկնորսական կարթածողերը, առավել ևս, որ դրանք միասնաբար կատարում են իրենց բոլորովին անհարիր մի գործողություն՝ «իջնում են բլրից»: Այստեղ կա լեզվական տեսակետից հետաքրքիր մի լուծում, որը նկատելի է բնագրի *"came over the hill"* արտա-

հայտության թարգմանության մեջ: Բանն այն է, որ "come over" նախդրավոր արտահայտությունը բազմիմաստ է և ունի տարբերակային մի շարք համար-
ժեքներ. «ա. ժամանել, փոխադրվել, տեղափոխվել, բ. մեկի կողմն անցնել, գ. տիրել, միտք հղանալ»: Անգլերեն լեզվում "come" բառը գործածվում է նաև առանձին և նշանակում է «գալ», ուստի այդ դեպքում նրան կից գործած-
ված "over" նախդիրը կարող է պահպանել իր անկախ իմաստը՝ շարժում մի բանի միջով, վրայով, մի կողմից մյուսը: Ելնելով համատեքստի թելադրած պահանջներից, թարգմանիչը կիրառել է ոչ թե «բլրի վրայով, միջով կամ մյուս կողմից գալիս էին նրանց ծայներն ու երեք բարակ կարթածողերը» տարբերակը, որն ինքնին անհեթեթ կլիներ հենց միայն այն պատճառով, որ կարթածողերն անտեսանելի կլինեին բլրի վրայով, միջով կամ մյուս կողմից գալիս, այլ՝ «Բլրից իջնում էին նրանց ծայներն ու երեք բարակ կարթածողերը», որը գյուզմա լինելով, նաև խոսում փոխանությունն է, որին հետևում է մի շատ պատկերավոր փոխաբերական համեմատություն⁴՝ «որ ասես վազող կրակի լեզուներ լինեին»: Մեն մի նախադասության մեջ ոճական հնարների կուտակման այսպիսի վառ օրինակի շատ հազվադեպ կարելի է հանդիպել, որը մեկ անգամ ևս վկայում է Ֆոլքների ոճավորողի ինքնատիպությունը:

"I could hear the clock and the roof and Caddy" /p. 35/.

հմմտ.

«Լսում էի ժամացույցի, կտուրի ու Քեդդիի ծայնը» /էջ 42/:

Այս նախադասության մեջ միավորվել են ժամանակը խորհրդանշող ժամացույցը, տանիքը, որը խեղամիտ Բենջիի պատկերացմամբ շնչավոր է, ուստի և ծայն է արձակում, և նրա սիրելի ու անփոխարինելի քույրը, որի ծայնը դեռ լսվում և կարծես ահագանգում է իր մոտալուտ հեռացումը: Զյուզմայի այս օրինակում մի յուրահատուկ հնչեղություն ունի «լսում էի կտուրի ծայնը» արտահայտությունը: Այն այստեղ կրկնակի դերակատարու-
թյուն ունի. ոչ միայն հանդես է գալիս որպես լեզվաոճական արտահայտ-
չամիջոց՝ անձնավորում (կտուրը մարդու պես ծայն է արձակում), այլև Բենջիի կերպարին բնորոշ ներհայեցական զգացողության արտաքին դրսևո-
րումն է: Անշուշտ, թարգմանչի համար այստեղ թարգմանական որևէ էական դժվարություն չի եղել, եթե անտեսենք այն հանգամանքը, որ գյուզման կարող էր կորցնել իր ռեզոնանսները կամ նույնիսկ իսպառ վերանալ, եթե թարգմանիչն ուշադիր չլիներ նրա գոյության հանդեպ և ժամացույցի ու Քեդդիի ծայների կողքին անտեսեր «կտուրի ծայնը», որը լսելի էր միայն Բենջիին, և թարգմաններ ոչ թե՝ «...լսում էի կտուրի... ծայնը», այլ ասենք՝

բացատրությամբ՝ «կտուրից եկող ծայնը»: Ահա հենց այստեղ է, որ գնահատելի է թարգմանչի գիտակ, ուշադիր և խնամքով կատարած աշխատանքը: «We went along the brick walk, with our shadows»/ p. 22/.

հմմտ.

«Քայլեցինք աղյուսապատ ճամփով, մեր ստվերների հետ» /էջ 28/:

Բենջիի ներքին մենախոսության մեջ առկա է արտաքին աշխարհի ընկալման ընդգծված արտառոց կերպը, որն էլ Ֆոլքներին հնարավորություն է ընձեռել նրա խոսքում հաճախ կիրառել «գյուզմա» յուրատեսակ արտահայտչամիջոցը: «Աղյուսապատ ճամփով քայլում էին մարդիկ ու նրանց ստվերները», - ահա սովորական, առօրյա կյանքի թոփուրոփում ստվերների աշխարհի հետ իրենց կապը խզած մարդկանց համար արտասովոր մի նրբազգացություն, որը գուցե ի սկզբանե ամենաճիշտն էր, սակայն աղավաղվել ու կորսվել է ժամանակների մեջ: Այսօր արդեն՝ քաղաքակիրթ մեր ժամանակներում, այդ ընկալումը մտազարություն է համարվում:

Թարգմանության մեջ պահպանելով բնագրի շարադասությունը, որը շատ բնորոշ է անգլերեն նախադասությանը (տվյալ դեպքում շարժում ցույց տվող բայ-ստորոգյալից հետո տեղի պարագայի գործածությունը, որին հաջորդում է *with our shadows* - «մեր ստվերների հետ» կապակցությունը, որը մի այլ բայի դեպքում կարող էր հանդես գալ անմիջապես բայից հետո, որին կհաջորդեր տեղի պարագան, օր.¹ *I was reading a book with my friend in the reading - hall.*), թարգմանիչն աղավաղել է հայերեն նախադասության շարադասությունը, որը կարող էր լինել. «Մեր ստվերների հետ քայլեցինք աղյուսապատ ճամփով», կամ «Աղյուսապատ ճամփով քայլեցինք մեր ստվերների հետ», սակայն հենց այդ միջոցով էլ պահպանել է Բենջիի խոսքին բնորոշ աղճատված արտահայտչաձևը:

Վերոբերյալ օրինակները ևս մեկ անգամ վկայում են, որ յուրաքանչյուր թարգմանչի առջև ծառացած խնդիրների շարքում ոչ պակաս կարևորություն ունի բնագրի լեզվաոճական յուրահատկությունների ուսումնասիրությունը և դրանց համարժեք պահպանումը թարգմանության մեջ:

¹ Faulkner W., *The Sound and the Fury*, A novel, Introd. by R. Hughes, USA, L., Chatto & Windus, 1954, 401 p. /Այսուհետև՝ այս գրքի բոլոր մեջբերումների էջերը կից բնագրին/:

² Ֆոլքներ Ու., Շառաչ և ցասում, թարգմ.՝ Դավաթյան Գ., Փրինթ - ինՖո, Ե., 2003, 224 էջ, /Այսուհետև՝ այս գրքի բոլոր մեջբերումների էջերը կից բնագրին/:

³ Նազարյան Ա., Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Ե., Ապոլոն, 1993, 656 էջ:

⁴ Гаспарян С., Фигура сравнения в функциональном освещении, Ер. Гос. Университет, Ер., 2000, 324 стр.